իրաւունս ես զի մտից 'ի այսպիսի համարձակութիւն 'ի պատճառէ, զի յաւելի քանթէ չորս հարիւր ամաւ ժամանակաւ վարելով մեք յաղգս Հայոց կեանս ծառայութեան, և 'ի պատճառէ անտերունչութենէ խափանեցան տունք հրահանգաց և ուսումն արանս մերոց և շաղախեցաւ լեզու մեր ընդ բառբառս այլ ազգաց և արգելեաց իմացումն ընթերցման պատմութեանց մերոց և 'ի այս պատճառէ մանկունք հայոց հազիւ գտանի այժմ ընթերցօղք և ունօղ սէր 'ի ընթերցմունս և եթէ հազիւ ընթերցօղք, ուրեմն յոյժ սակաւ արհեստիւ կարդացօղ որ ոչ կարէ հասկանալ ընթերցեալն իւր, և 'ի այսպիսի պատճառէ այլ ազգիք 'ի վերայ մեր յիշխելով շփոթեցաւ բառբառս ազգին Հայոց առ 'ի զանազան բառբառս՝ ոմն Օսմանցւոց, ոմն պարսից բառիւ, և նոքա որում խօսին հայերէն խառնել և շփոթեալ ունին ընդ ամենայն բառբառս այլ ազգաց, և կատարածն նմանի որպէս սովորութիւն է ընութեան մերոյ, որում գեղեցկագոյն ծաղիկ, որ ցանկանալով խլիմք 'ի բուսոյ իւրմէ մերձեցուցանելով 'ի քինթս մեր՝ եթէ ոչ զտցուք հոտ անուշից յամանգամայն 'ի բաց արկանեմք, նոյնգունակ 'ի այսպիսի կացութեամբ կենօք գտանելով մեր գրեանք պատմութեանց թագաւորաց և քաջ զօրավարաց մերոց ընթեռնուլով և ոչ հասկանալով 'ի բաց ձգեմք գրքուկն, վասն այս-